# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-23/22 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 4 | Սվիտերներ / Շապիկ կանաչ, կարճաթև | Ծանոթություն-տվյալ ապրանքը ապրանքային նշան չունի | Ծանոթություն-տվյալ ապրանքը մակնիշ չունի | «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ | 4. Շապիկ մուգ կանաչ (խակի), կարճաթև - Գործվածքը տրիկոտաժ, 100+/-2% բամբակ բաղադրությամբ, մակերեսային խտությունն առնվազն 180 գրամ, գույնը՝ մուգ կանաչ (խակի): Գույնի երանգը նախապես համաձայնեցվում է Պատվիրատուի հետ: Արտաքին տեսքը՝ ուղիղ ձևածքով, կարճաթև, կլոր օձիքով՝ վզամասը մշակված տրիկոտաժե էլաստիկ մանժետով: Թևքերի երկարությունը ուսի միացման կարի կենտրոնական հատվածից 2-րդ հասակային խմբի համար 22-23սմ, յուրաքանչյուր հաջորդ խմբի համար |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ավելանում է 1սմ: Ուսամասերն ամբողջությամբ վրակարված են համազգեստի գործվածքով (մակերեսային խտությունը` 220±5 գրամ/մ2, բաղադրությունը` 65±2% պոլիէսթեր, 35±2% բամբակ, գործվածքի տեսակը` <<TWILL>>, ներկման մեթոդը` <<Ռեակտիվ>>, գույնը` մուգ կանաչ): Թևքերի միացման կարերի մեջից մշակված են 4.5-5սմ լայնությամբ կամրջակներ 7X5սմ չափսի կոչման տարբերանշանի անցկացման համար: Կամրջակների եռանկյունաձև ծայրերը կոճկվում են մետաղական կոճգամներով: Ձախ թևին` ուսագլխից 6սմ ներքև ասեղնագործված և կարված է ՀՀ եռագույն դրոշը` 7սմ լայնությամբ և 3.5սմ բարձրությամբ, ներքևում գրված «ՀԱՅԱՍՏԱՆ», իսկ աջ թևքի կենտրոնում Փրկարար ծառայության տարբերանշանը: Շապիկի ներսի կողմից` ստորին հատվածում կարվում է պիտակ վրան նշված չափսը, արտադրողի անվանումը և խնամքի պայմանները: Չափսերը և կոչումների քանակները |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | կտրամադրվեն պատասխանատու ստորաբաժանման կողմից՝ յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարումից առնվազն մեկ ամիս առաջ: Բոլոր տարբերանշանները ամրացվում (կարվում) են տարբերանշանի վրա ասեղնագործված եզրակարերին համապատասխան գույներով: Կոչման տարբերանշանը արտադրվում է համազգեստի գործվածքից՝ հանովի օղագոտու տեսքով: Արտաքին չափսերը՝ 7X5սմ: Թույլատրելի շեղումը +/- 2%: Աստղերն ասեղնագործված բեժ գույնի թելով, հնգաթև, ուռուցիկ, 13 և 20մմ տրամագծերով: Գնդապետ, փոխգնդապետ, մայոր – 20մմ-ոց աստղեր: Կապիտան, ավագ լեյտենանտ, լեյտենանտ, ավագ ենթասպա, ենթասպա 13մմ-ոց: Աստղերը պետք է տեղակայվեն հետևյալ կերպ՝ Գնդապետ – տարբերանշանի ներքևի եզրից մինչև աստղերի կենտրոնը 25մմ, երկու աստղ իրար կողքի, երրորդ աստղը 25մմ հեռավորության վրա առաջին շարքի աստղերի կենտրոնից: Փոխգնդապետ – |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | տարբերանշանի ներքևի եզրից մինչև աստղերի կենտրոնը 25մմ, երկու աստղ իրար կողքի: Մայոր – տարբերանշանի ներքևի եզրից մինչև աստղի կենտրոնը 45մմ: Կապիտան – տարբերանշանի ներքևի եզրից մինչև աստղերի կենտրոնը 20մմ երկու աստղ իրար կողքի, երրորդ աստղը 20մմ հեռավորության վրա առաջին շարքի աստղերի կենտրոնից, չորրորդ աստղը 20մմ հեռավորությն վրա՝ երրորդի կենտրոնից: Ավագ լեյտենանտ – տարբերանշանի ներքևի եզրից մինչև աստղերի կենտրոնը 25մմ երկու աստղ իրար կողքի, երրորդ աստղը 25մմ հեռավորության վրա առաջին շարքի աստղերի կենտրոնից: Լեյտենանտ – տարբերանշանի ներքևի եզրից մինչև աստղերի կենտրոնը 25մմ հեռավորության վրա երկու աստղ իրար կողքի: Ավագ ենթասպա – տարբերանշանի ներքևի եզրից մինչև առաջին աստղի կենտրոնը 20մմ, երկրորդ աստղը 20մմ հեռավորության վրա առաջին աստղի կենտրոնից, երրորդ աստղը 20մմ հեռավորության վրա երկրորդ |

աստղի կենտրոնից: Ենթասպա – տարբերանշանի ներքևի եզրից մինչև առաջին աստղի կենտրոնը 25մմ, երկրորդ աստղը 25մմ հեռավորության վրա առաջին աստղի կենտրոնից: Ավագ - տարբերանշանի մեջտեղով՝ վերին և ստորին եզրերից 5-ական մմ հեռավորության վրա, բաց շագանակագույն /բեժ/ գույնի թելով, 12մմ լայնությամբ կարվում է մեկ ժապավեն ուղղահայց դիրքով: Ավագ սերժանտ - տարբերանշանի մեջտեղով՝ աջ և ձախ եզրերից 5-ական մմ հեռավորության վրա, բաց շագանակագույն /բեժ/ գույնի թելով, 12մմ լայնությամբ կարվում է մեկ ժապավեն հորիզոնական դիրքով: Սերժանտ - տարբերանշանի մեջտեղով՝ աջ և ձախ եզրերից 5-ական մմ հեռավորության վրա, բաց շագանակագույն /բեժ/ գույնի թելով, կարվում են 5մմ լայնությամբ երեք ժապավեններ հորիզոնական դիրքով՝ իրարից 3մմ հեռավորության վրա: Կրտսեր սերժանտ - տարբերանշանի մեջտեղով՝ աջ և ձախ եզրերից

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Масиси Гарун Кари Фабрика ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-23/22 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 4 | | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | 5-ական մմ հեռավորության վրա, բաց շագանակագույն /բեժ/ գույնի թելով, կարվում են 5մմ լայնությամբ երկու ժապավեններ հորիզոնական դիրքով՝ իրարից 3մմ հեռավորության վրա: Փաթեթավորումը պիտակավորված պարկերով՝ վրան նշված տեսականու անվանումը, չափսը, արտադրողի անվանումը: Յուրաքանչյուրը անհատական փաթեթավորմամբ: Մատակարարումից հետո հայտնաբերված խոտանի դեպքում Մատակարարը պարտավոր է Պատվիրատուի պահանջով դրանք վերացնել։ Մատակարարված ապրանքի ողջ խմբաքանակը պետք է համապատասխանի նախօրոք ներկայացված նմուշին: Պատվիրատուի պահանջով մատակարարից կարող է պահանջվել գործվածքի բաղադրության, մակերեսային խտության, ներկի կայունության վերաբերյալ լաբորատոր հետազոտության եզրակացություն՝ ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպությունից: |